Ա.

Յայտնի է պատմութիւնից, որ ոչ մի պատմական ազգ այնքան մեծ ազդեցութիւն չէ ունեցել Հայերի վրայ, այնքան սերտ միջամտութիւն չէ գործել նրանց՝ մինչեւ անգամ ընտանեկան գործերի մէջ, որքան պարսկական ազգը։ Դեռ ամենահին պատմական ժամանակներում, Պարսիկները մեծ դեր են խաղացել Հայ պատմութեան մէջ։ Մենք գիտենք, որ Հայաստանը դեռ թագաւորական իշխանութիւն ունենալուց յառաջ՝ տարեկան իբրեւ հարկ վճարում էր Պարսկաստանին 20.000 երիվար։ Մեր Արշակունի հարստութեան հիմնադիրը, այդ փառաւոր թագաւորութեան նախահայրը, որ այնքան երկար ժամանակ իշխեց Հայաստանում, միխսքով՝ Վաղարշակը՝ — Պարսից թագաւորի եղբայրն էր։ Քանի որ Պարսկաստանի մէջ տիրում էր Հայաստանի թագաւորների ազգական ցեղը, այդ տէրութիւնները միմեանց հետ հաշտ էին եւ միմեանց օգնում էին, բայց երբ Պարսկաստանում սկսեց տիրել Սասանեան ցեղը, օրինակ՝ Հայոց Խոսրով թագաւորի ժամանակ, Հայաստանը փախստականներին եւ հալածականներին իբրեւ ապաստանարան էր ծառայում։ Այդ երկու երկիրների մէջ փոխադարձ յարաբերութիւնները դիւրացնում էր եւ այն հանգամանքը, որ երկուսն էլ համակրօն էին, բայց երբ Հայաստանն ընդունեց քրիստոնէութիւնը, այն ժամանակ խտրութիւնը մեծացաւ եւ հետզհետէ մինչեւ յայտնի թշնամութեան հասաւ,